

Թամար Լ. Հայրապետյան
tamar.hayrapetyan@gmail.com
ORCID: 0009-0001-1023-8683

ԲԱՐՈՑԱԻՐԱՎԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՆԱԳԵՏ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ «ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱԿՆԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՄ*

Ամփոփում

Հովսեփ Օրբելու բանագիտական գործունեությունը, մասնավորապես հայկական հերոսական էպոսի ուսումնասիրությունը, բավականին մանրամասն գնահատության է արժանացել մասնագիտական գրականության մեջ: Սույն հոդվածում քննվում է Հ. Օրբելու «Միջնադարյան Հայաստանի առակները» վերնագրով հայագիտական ուսումնասիրությունը՝ բնագրերով, որը պատշաճորեն չի լուսաբանվել մասնագիտական շրջանակներում:

«Միջնադարյան Հայաստանի առակները» աշխատության մեջ Հ. Օրբելին Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու և Ռոդոպիոսի առակների միջոցով բացահայտում է դարաշրջանի բարոյաիրավական, սոցիալ-տնտեսական, պատմամշակութային իրողությունները: Օրբելու «Միջնադարյան Հայաստանի առակները» ժողովածուի նյութը սերտորեն առնչվում է ժողովրդական բանահյուսությանը և ունի բանագիտական մեծ արժեք:

Հեղինակը հայկական առակները քննել է ըստ Նիկողայոս Մառի կազմած առակների բանագիտական նշացանկի:

Գիրքն ունի այբբենական և սկզբնաղբյուրների մատենագիտական ցանկեր, ծանոթագրություններ, որտեղ տեղեկություններ և բացատրություններ են տրվում առակների ժանրային տիպաբանության, սոցիա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.12.2025:

լական ուղղվածության, թեմաների և սյուժեների տարածվածության վերաբերյալ:

Հ. Օրբելու դիտարկումները Մ. Գոշի, Վ. Այգեկցու և Ողոմպիոսի առակներում արտացոլված միջնադարյան Հայաստանի (նաև Կովկասի) XII-XIII դդ. հասարակական և մշակութային կյանքի վերաբերյալ մեծապես նպաստել են բանագիտական բազում խնդիրների բացահայտմանը:

Բանալի բառեր – Հովսեփ Օրբելի, բանահյուսություն, գրականություն, բանագիտություն, առակներ ու զրույցներ, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, ձեռագիր ժողովածուներ, Մանուկ Աբեղյան, Նիկողայոս Մառ, միջնադարյան Հայաստան:

Tamar L. Hayrapetyan

MORAL AND LEGAL PRINCIPLES IN THE COLLECTION OF FOLKLORIST JOSEPH ORBELI'S "FABLES OF MEDIEVAL ARMENIA"

Abstract

The activity of Joseph Orbeli in folklore studies, especially exploration of the Armenian epic poem has great value in scientific literature. The purpose of this article is to examine another Armenological work by Joseph Orbeli, “Fables of Medieval Armenia” along with its original texts, which have not been properly covered by researchers.

In his work "Fables of Medieval Armenia," Joseph Orbeli reveals the moral, legal, socio-economic, historical, and cultural realities of that era through the fables of Mkhitar Gosh, Vardan Aygektsi, and Olympian.

“Fables of Medieval Armenia” of Joseph Orbeli is closely related to folklore and has great value. Joseph Orbeli examines Armenian fables based on the catalogue of fables compiled by Nikoghayos Mar. The book includes an alphabetical and bibliographical list of sources and annotations, in which information and explanations are given on the genre typology of fables, social orientation, prevalence of topics and plots.

The observations of Joseph Orbeli regarding the social and cultural life of Medieval Armenia (as well as the Caucasus) in the 12th-13th centuries, as reflected

in the fables of Mkhitar Gosh, Vardan Aygektsi, Olympian, can greatly contribute to the identification of many folkloristic problems.

Key words- Joseph Orbeli, folklore, literature, folklore studies, fables and parables, Mkhitar Gosh, Vardan Aygektsi, manuscript collections, Manuk Abeghyan, Nikoghayos Mar, Medieval Armenia.

Тамар Л. Айрапетян

МОРАЛЬНО-ПРАВОВЫЕ ПРИНЦИПЫ В СБОРНИКЕ ФОЛЬКЛОРИСТА ИОСИФА ОРБЕЛИ «БАСНИ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ»

Резюме

Исследование фольклора Иосифом Орбели, в частности его работы по изучению армянского героического эпоса, получило высокую оценку в научной литературе. В данной статье рассматривается одно из менее изученных арменоведческих исследований Иосифа Орбели - «Басни средневековой Армении», включающее оригинальные тексты, которое до настоящего времени не получило должного освещения в профессиональных кругах. В работе «Басни средневековой Армении» Иосиф Орбели раскрывает морально-нравственные, правовые, социально-экономические, исторические и культурные реалии эпохи через басни Мхитара Гоша, Вардана Айгекци и Олимпиана.

Данное исследование по своему содержанию непосредственно связано с фольклорной традицией и представляет значительную научную ценность. Иосиф Орбели исследует армянские басни, опираясь на каталог басен, составленный Никогайосом Маром. В анализируемом издании представлены алфавитный и библиографический перечни первоисточников, а также примечания, в которых даются пояснения относительно жанровой типологии притчи, её социальной направленности, а также распространённости тем и сюжетов.

Анализ, проведённый Иосифом Орбели социально-культурной жизни средневековой Армении XII–XIII вв. (а также Кавказского региона), нашедших отражение в притчах Мхитара Гоша, Вардана Айгекци и Олимпиана, способствует выявлению и осмыслению ряда актуальных фольклористических проблем.

Ключевые слова: Иосиф Орбели, фольклор, литература, фольклористика, притчи и басни, Мхитар Гош, Вардан Айгекци, коллекции рукописей, Манук Абегиан, Никогайос Мар, средневековая Армения.

Մուտք

Միջնադարյան Հայաստանի առակները խորությամբ քննվել են հայ գրականագիտության մեջ: Տակավին 19-րդ դարի 90-ական թթ. Հովսեփ Օրբելու ուսուցիչ, Նիկողայոս Մառը համակողմանիորեն ուսումնասիրել և բավարար լուծում է տվել հայկական առակների ձեռագիր ժողովածուների, նրանց աստիճանական ձևավորման, դարերի ընթացքում գրական այդ տեսակի կրած փոփոխությունների, ազգային և միջազգային առնչությունների հարցերին: Ավելի վաղ առակագրությանն առնչվող տեսական հասկացություններն ու գլխավորապես Մխիթար Գոշի երկերում կիրառված տերմիններն արժանացել են Մանուկ Աբեղյանի ուշադրությանը:

Հայկական առակների նկատմամբ Հ. Օրբելու հետաքրքրությունը խորացել է Ն. Մառի «Վարդանի առակների ժողովածուները» (Մառ, 1894-1899, I-III) խորագրով մագիստրոսական եռահատոր աշխատության մեջ գետեղված բազմաթիվ ձեռագիր տեքստերից, որոնք հրատարակվել են 1899 թվականին:

Մոկսում ձեռք բերած գիտական փորձառությունից հետո թեև Հ. Օրբելու հետաքրքրությունների շրջանակը շարունակ ընդլայնվում է, սակայն Վանա լճի մերձակայքում լսած ու գրառած առակները նրան կրկին վերադարձնում են հայ բանավոր ավանդության իր նախընտրած ժանրին, և 1931 թվականից նա իր առջև նպատակ է դնում միջնադարյան Հայաստանի առակները ուսումնասիրել և թարգմանել բանագիտության տեսանկյունից:

Ուսումնասիրության նպատակից բխող խնդիրներն են՝ առակների ժանրային տիպաբանության, սոցիալական ուղղվածության, թեմաների և սյուժեների տարածվածության, ազգային և միջազգային առնչությունների վերաբերյալ Հ. Օրբելու մոտեցումների հստակեցումն ու վերլուծությունը:

Սույն ուսումնասիրության գիտական նորույթը «Միջնադարյան Հայաստանի առակների» հետազոտությունն է՝ Նիկողայոս Մառի առակների բանագիտական նշացանկի համարակալման միջոցով, որի իրականացումն առակների բանագիտական-բանահյուսական, գրական և իրավագիտական աղբյուրների հիման վրա՝ պատշաճ կերպով չի լուսաբանվել մասնագիտական շրջանակներում:

1. Միջնադարյան Հայաստանի առակների բարոյաիրավական և ճանաչողական արժեքը

Խոսելով միջնադարյան առակների (ինչպես հայտնի է, «առակն» – աչքի առաջ) ժողովածուների միջազգային տարածման մասին, Նիկողայոս Մառը նշել է, որ «հայկական ժողովրդական գրքերը իրենց տեսակի մեջ առաջինն էին, որ նպաստեցին տարբեր ազգերի գրագետ խավերի մերձեցմանը՝ սկսած արաբներով բնակեցված Միջագետքից և Սիրիայից մինչև Կովկասյան լեռները» (Mapp, 1936, 84):

Թեև Հ. Օրբելին գիտակցում էր, որ առակների հսկայածավալ նյութի քննությունն ու թարգմանությունը գիտական բարդ խնդիր է, սակայն Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու և Ողոմապիոսի հեղինակությամբ հայտնի առակները մեծ գիտնականի պրպտումների մշտական առարկան են:

1911 թ. հուլիսի 1-ին Ն. Մառի առաջարկությամբ Հ. Օրբելին ուղևորվում է Վան՝ զբաղվելու տեղի հնություններով, բարբառագիտական ու բանագիտական ուսումնասիրությունների համար նյութեր գրանելու նպատակով:

1911-1912 թթ. Մոկսում գրառած բանահյուսական հարուստ նյութերը Օրբելին ընդգրկել է «Մոկաց տեքստեր» աշխատության մեջ, որը լույս է տեսել նրա մահից 21 տարի անց «Մոկսի բանահյուսությունն ու կենցաղը» (Орбели, 1982, 3-144) վերնագրով՝ նրա երախտագետ աշակերտ Կարեն Յուզբաշյանի խմբագրությամբ:

2002 թ. «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել Հ. Օրբելու աշխատությունների համահավաք ժողովածուն, որ նաև Մոկսում նրա գրառած նյութերի հայերեն բնագրերն ու դրանց ռուսերեն թարգմանություններն է ներառում (Орбели, 2002, 53-185):

«Հայկական առակների առաջին, ըստ ամենայնի համակարգված ժողովածուն կազմել է Մխիթար Գոշը մեզանից ավելի քան ութ դար առաջ՝ իր հյուսած պատումները համախմբելով երկու բաժնում. «Առակք առասպելականք և բարոյականք» և «Առակք ստեղծականք» (Հակոբյան, 1995, 169-190):

Պետերբուրգի համալսարանի երկու ֆակուլտետների շրջանավարտ, բանասիրական փայլուն պատրաստությամբ Հ. Օրբելին հայկական առակների թարգմանությունը իրականացրել է՝ բնագրերին հարազատ մնալով և պահպանելով լեզվաոճական առանձնահատկությունները:

1956 թ. ՍՍՀՄ ԳԱ հրատարակչությունը Ա. Ղանալանյանի խմբագրությամբ լույս է ընծայել Հ. Օրբելու կազմած «Միջնադարյան Հայաստանի առակները» ժողովածուն՝ համառոտ առաջաբանով և ծանոթագրություններով (Օրբելի, 1956, 3-180):

Թե որքան է կարևորել Հ. Օրբելին հայ առակագիտական միտքը, երևում է գրքի ընծայականից. «Իմ միակ որդուն՝ Դիմիտրի Օրբելուն է նվիրված այս գիրքը» («Сыну моему единственному, Димитрию Орбели, посвящена эта книга») (Օրբելի, 1956, 3-180):

Ուշագրավ է Հ. Օրբելու դիտարկումը միջնադարյան առակների ճանաչողական արժեքի մասին. «Թեև առակներում պատմական անձեռի անուններ չեն հիշվում, բայց նրանցից շատերը երբեմն ավելի շատ բան են տալիս Հայաստանի պատմությունը ճիշտ հասկանալու համար» (Օրբելի, 1956, 14-15):

Յուրացնելով ու զարգացնելով Ն. Մառի հիմնարար դրույթները՝ Հ. Օրբելին արտահայտվել է առավել որոշակի. «Այդ առակներից շատերը թարգմանաբար մուտք են գործել Վրաստան՝ խառնվելով վրացական ժողովրդական բանահյուսությանը: Շատերն էլ արաբերեն թարգմանությամբ մուտք են գործել արաբական միջավայր՝ դրանով իսկ ճանապարհ հարթելով դեպի հեռավոր Արևմուտք» (Օրբելի, 1956, 21):

1968 թ. Հ. Օրբելու «Ընտիր աշխատությունների» առաջին գրքում հետմահու լույս է տեսնում «Միջնադարյան Հայաստանի առակները» (Օրբելի, 1968, 207-536) ծավալուն հետազոտությունը, որի հիմքն են ոչ միայն բանահյուսական, այլև իրավագիտական աղբյուրները:

Հ. Օրբելին կարևորում է իրավագիտության պատմության մեջ հայտնի այն եզակի իրողությունը, երբ պետականության բացակայության պայմաններում Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» (1184 թ.) շնորհիվ հայոց իրավական միտքը ապրում է իր ծաղկուն ժամանակներից մեկը, ինչն արտահայտվում է նաև հեղինակի առակներում:

Հ. Օրբելին նկատում է, որ առակների և առականման գրույցների հանրամատչելի բովանդակությամբ Մխիթար Գոշը փորձել է հող նախապատրաստել և ժողովրդի մեջ արմատավորել բարոյաիրավական որոշակի սկզբունքներ, որ արտացոլվել է նաև «Դատաստանագրքում», որի մի շարք հոդվածներում (II մաս, հոդ. 13, 14, 120 և այլն) պատիժներ ու հատուցումներ անգույթ տերերի համար, որոնք ոչ միայն աշխատանքի անհրաժեշտ պայմաններ չեն ապահովում, այլև ստիպում են շինականներին ու վարձկաններին ուժից վեր աշխատանք կատարել (Օրբելի, 1968, 287-288); (Գոշ, 1880, 320, 325, 330):

Մ. Գոշի «Сокол и голубь» (Մ. 116)¹ («Բազեն ու աղավնին»), (Օրբելի, 1968, 432), Վ. Այգեկցու «Голубь» (Յ. 131) («Աղավնին»), (Օրբելի, 1968, 462) առակներում ծաղրի են ենթարկվում աշխարհիկ իշխանները, որոնք ունեգրկում են իրենց հնազանդյալներին, անգամ հետապնդում և պատուհասում նրանց:

Վ. Այգեկցու «Лев, волк и лиса» (Յ. 39) («Առյուծ և՛ գայլ, և՛ աղվես»), (Օրբելի, 1968, 339) առակում գայլի դուրս թռած աչքերը սովորեցնում են աղվեսին, «աստծո կամոք», ողջ որսը թողնել առյուծին՝ «խոյր ճաշին, մաքին հրամենքին, գառը՝ ընթրիքին» (И спросил лев: «О жалкая лисичка, кто тебя научил этому справедливому разделу?»)։ Говорит лиса: «Глаза волка, что выскочили наружу, научили меня») (Օրբելի, 1968, 339):

Ընդգրկելով հասարակական կյանքի այլ ոլորտներ, այս բարոյաիրավական սկզբունքները ուշագրավ են նաև առողջապահության բնագավառում: Մ. Գոշի «Դատաստանագրքի» որոշ հոդվածներ, որոնք պատասխանատվություն են սահմանում բժշկական ոչ գրագետ միջամտությունների և չփորձարկված դեղամիջոցներ օգտագործելու առնչությամբ (II մաս, հոդ. 119), (Գոշ, 1880, 330), արտահայտվել են Գոշի համապատասխան առակներում «Пренебрежение к врачам» (Մ. 173) («Բամահրանք բժիշկների հանդեպ»), (Օրբելի, 1968, 287) «Глупец и врач» (Մ. 174) («Հիմարն ու բժիշկը»), (Օրբելի, 1968, 287) «Мак» (Մ. 49) («Խաշխաշ»), (Օրբելի, 1968, 287) և այլն:

«Միջնադարյան Հայաստանի առակները» (Օրբելի, 1968, 207–536) Օրբելու համարձակ աշխատությունք է, որ, ներկայացնելով 12–13–րդ դարերի Հայաստանի հասարակական կյանքն ու մշակույթը, նա «փորձ է կատարել պարզաբանելու, թե ինչպիսի արձագանք է գտել դարաշրջանը առակներում: Խոսքը, անշուշտ, անուղղակի արձագանքի մասին է (ո՛չ առակները, ո՛չ էլ նրանց խրատական բնույթի ամփոփումները անմիջապես չեն արտահայտել պատմամշակութային, հասարակական երևույթները): Սակայն ընտրած սյուժեները, հերոսների (լինեն դրանք կենդանիներ, թռչուններ կամ մարդիկ) վարքագիծը, նրանց հարաբերությունները, շատ դեպքերում, պատճառաբանված են XII–XIII դդ. հայ իրականությամբ» (Յուզբաշյան, 1987, 87):

¹ Օրբելու կողմից առակների վերնագրերին կից փակագծերում տրված թվերը համապատասխանում են Ն. Մառի նշացանկին, որը կցված է Օրբելու գրքի վերջում, որտեղ ռուսերեն «М»-տառը մատնացույց է անում Մխիթար Գոշի, «В» տառը՝ Վարդան Այգեկցու, «О» տառը՝ Ողոմափոսի առակները (Օրբելի 1968, 529–534):

Գիրքը բովանդակում է Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու և Ողոմպիոսի² 447 առակների (ներառյալ հավելվածի առակները) թարգմանությունները. կցված են առակների սկզբնաղբյուրների մատենագիտական ցանկերը, համառոտագրությունների, անձնանունների և առարկայական տեղեկատուների ցանկերը:

Առաջաբանում և ծանոթագրություններում հեղինակը առակների ժանրային տիպաբանության, սոցիալական ուղղվածության, թեմաների և սյուժեների տարածվածության մասին բացատրություններին զուգահեռ անդրադառնում է պատմաբանասիրական և մշակութաբանական հարցերի պարզաբանմանը, հաճախ սրամիտ դիտարկումներ է անում՝ իրար հետ կապելով մինյանցից բավական հեռու թվացող երևույթներ ու տեսակետներ (Орбели, 1968, 211):

2. Պատմահասարակական իրողությունները՝ միջնադարյան Հայաստանի առակներում

Հ. Օրբելին իրականացնում է միջնադարյան Հայաստանում կենցաղավարող առակների զուգադրական քննություն՝ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները համադրելով նույն ժամանակաշրջանին վերաբերող պատմահնագիտական նյութերի, բերդաքաղաքների ընձեռած տվյալների հետ (միջնադարյան բերդաքաղաք Անին, Բագրատունյաց թագավորության Պահլավունի իշխանների ռազմապաշտպանական հենակետ քաղաք-ամրոց Ամբերդը և այլն):

Հ. Օրբելու նախնական դիտարկումները՝ միջնադարյան առակների պատմական սկզբնաղբյուրներ լինելու մասին, հավանության են արժանանում Ն. Մառի կողմից, ինչին էլ պիտի հետևեր հետազոտություն այն մասին, թե հայ միջնադարյան առակներն արդյոք 12-13-րդ դդ. հայ իրականության արտահայտությունն են, թե՞ պարզապես համաշխարհային դարավոր փորձի հուշարձաններ:

Առակների հետ կապված այս կարևոր հարցը, այնուամենայնիվ, մնում է թեական (Յուզբաշյան, 1987, 88), որը Մ. Աբեղյանը խորամտորեն բացատրում է մեր դարավոր պատմության զանազան շրջանների, ընդհուպ մինչև 19-րդ դարի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի

² Անտիկ աշխարհի առակախոս Եզոպոսի 15 միավոր առակները, որոնք 6-7-րդ դդ. Առաջին անգամ հայերեն են թարգմանվել և հռետորաբար մշակվել, հայտնի են Օլիմպիան, Ողոմպիան և Ողոմպիոս անուններով:

պարզաբանության մասին գիտական որևէ ուսումնասիրության բացակայությամբ (Աբեղյան, 1968, 11):

Պիոն Հակոբյանի կարծիքով՝ Ն. Մառի, Մ. Աբեղյանի և Հ. Օրբելու ծավալած հետազոտական աշխատանքը՝ հսկայածավալ փաստական նյութով և ծանրակշիռ եզրակացություններով տեսադաշտից դուրս է թողել հին և միջնադարյան Հայաստանում առակների մասին գոյություն ունեցող տեսությունների համակողմանի քննությունը: Վաղ միջնադարից սկսած՝ դրա առնչությամբ որոնումներ է իրականացրել հայ գիտական միտքը՝ հանձինս Մովսես Բերթողի, Ստեփաննոս Սյունեցու և Դիոնիսոս Թրակացու «Քերականության» և նրա առաջին հայ մեկնիչների (Հակոբյան, 1995, 170-171):

Համախոս լինելով հետազոտողների այն կարծիքին, որ միջնադարյան առակների ուսումնասիրությունը գիտական բարդ խնդիր է, Օրբելու աշխատությունը անհերքելի մեծ ներդրում պետք է համարել հայ միջնադարյան մշակույթի ուսումնասիրության բնագավառում, քանի որ այն կարող է հետագա ուսումնասիրողներին մղել նոր վերլուծությունների հարցադրումների:

Ուշագրավ է նաև օրենսդիր և առակագիր Մ. Գոշի առաջ քաշած խնդիրների ու դրանց լուծման ուղիների ընդհանրության վերաբերյալ Օրբելու այն դիտարկումը, որ երկու դեպքում էլ թե՛ «Դատաստանագիրքը» և թե՛ առակները, ունենալով հստակ գործնական նշանակություն, ընդգծում են կենտրոնացված ուժեղ պետականություն ունենալու գաղափարը (Օրբելու, 1968, 215-216), որն իրագործելու համար Գոշի «Три видения царя» (Մ. 100) («Թագավորի երեք երազները»), (Օրբելու, 1968, 296) առակը ուսուցանում է համախմբել հասարակության բոլոր անդամների ջանքերը՝ անկախ դիրքից և սոցիալական վիճակից: Իսկ մարդկանց լավ կամ վատ արարքները, առակագրի համոզմամբ, ամենից առաջ ոչ թե սեփական ցանկության, այլ ժամանակի հասարակական հարաբերությունների և առկա իրադրության արդյունք են, ինչը տեսնում ենք Ողոմպիոսի «Осел во львиной шкуре» (Օ.10) («Ավանակը՝ առյուծի մորթու մեջ»), (Օրբելու, 1968, 501) առակում, որի մեկնաբանության համաձայն՝ սեփական կարողությունների գերագնահատումը, անտարակույս, հանգեցնում է զավեշտական ու ողորմելի վիճակի:

3. Բանահյուսությունը՝ գրականության աշխարհիկացման հիմք

12-րդ դարից սկսած՝ գրականության աշխարհիկացման հետևանքով ժողովրդական բանահյուսության որոշ տեսակներ սկսում են մուտք գործել գրականության ասպարեզ: Ներսես Շնորհալին մշակում ու գրում է հարյուրավոր հանելուկներ, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու շնորհիվ՝ առակներն ու առակատիպ զրույցները մտնում են հայ գրականություն՝ նպաստելով, որ պատմագրության ու բանահյուսության հետ սերտաձած գեղարվեստական արձակը դառնա գրականության ինքնուրույն բնագավառ (Աբեղյան, 1968, 12-13):

«Առակների հեղինակը իր ժողովածուն կազմել է՝ նպատակ ունենալով ստեղծելու հենց գեղարվեստական երկ՝ «կերպարանել զձջմարտութիւն», այն է՝ արտացոլել իրականությունը գեղարվեստորեն կամ, ինչպես հեղինակն է հասկանում, «բարոյապէս և առասպելորէն», այսինքն՝ այլաբանորեն. իսկ դա իրականության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկն է», - գրում է Մխիթար Գոշի «Առակների» ներածության հեղինակ Էմանուել Պիվազյանը (Գոշ, 1951, 6):

Հենց այս դիտանկյունից է Հ. Օրբելին արժևորում հայ միջնադարյան առակները, քանի որ առակների բանահյուսական ակունքներից բացի՝ նրան հետաքրքրում է նաև դարաշրջանի սոցիալ-պատմական իրադրության պատկերը, հասարակության շերտավորումը, արհեստներն ու զբաղմունքները և հատկապես դասակարգային պայքարի առկայությունը:

4. Առակներում գերիշխող սոցիալական և համակեցական խնդիրները

Հովսեփ Օրբելու ուշադրությանն են արժանանում հատկապես այն առակները, որոնց նյութը հասարակական ու կենցաղային խնդիրներն են, տարբեր դասակարգերի ու խավերի փոխհարաբերությունները, որոնցում գործող անձինք արհեստավորներն են՝ իրենց կացության առանձնահատկություններով, քանի որ դրանից նկատելի է դառնում, որ խորացել է աշխատանքի հասարակական բաժանումը:

Այս առումով ուշագրավ են Մխիթար Գոշի «Кузнец и медник» (Մ. 167) («Դարբինն ու պղնձագործը»), (Օրбели, 1968, 272) «Кузнец и плотник» (Մ. 165) («Դարբինն ու հյուսնը»), (Օրбели, 1968, 274) «Ткач и порт-

ной» (Մ. 166) («Ջուլիակն ու դերձակը»), (Օրբելի, 1968, 271) «Золото и пшеница» (Մ. 168) («Ոսկին և ցորենը») (Օրբելի, 1968, 294) առակները, որոնք ուսուցանում են, որ տարբեր ժամանակներում տարբեր արհեստներ ու արհեստավորներ կարող են մեծարելի լինել, ըստ որում նրանցից «հասարակաց օգտակարն պատուական է» («Полезный всем-достойн почета») (Օրբելի, 1968, 272):

Առակներում արտահայտված այն գաղափարախոսությունը, թե հպատակները պետք է հնազանդ լինեն թագավորական իշխանությանը, ամենայն հավանականությամբ, Գոշին հետաքրքրում է կենտրոնացված ուժեղ պետականության տեսանկյունից, նկատի ունենալով, որ երկիրը կանգնած էր մոնղոլական ներխուժման վտանգի առաջ: Բայց միաժամանակ առակագիրը թագավորից պահանջում է արդարադատություն, իր հպատակների անվտանգության և պաշտպանության երաշխիքներ, ինչը, անտարակույս, պայմանավորված է ժամանակաշրջանի ժողովրդական տրամադրություններով և ակնառու է Գոշի «Строптивый конь» (Մ. 106) («Անհնազանդ ձի»), (Օրբելի, 1968, 353) և «Лев-калека» (Մ. 85) («Հաշմանդամ առյուծը»), (Օրբելի, 1968, 429) առակներում:

«Անհնազանդ ձի» (Օրբելի, 1968, 353) առակում պատմվում է, թե փախչելով տիրոջից՝ ձին ինչպես է հայտնվում վտանգի մեջ: Մի կերպ ազատվելով առյուծից, արջից, գայլից և այլ գիշատիչներից՝ ձին հնազանդվում և վերադառնում է տիրոջ մոտ՝ ոչ թե կերի, այլ դաժան մահից խուսափելու համար:

Հ. Օրբելին առակին կցած ծավալուն մեկնաբանության մեջ «անհնազանդ ձիուն» և մյուս բոլոր հպատակներին տեր կանգնելը, նրանց վտանգից ու օտար կեղեքիչներից պաշտպանելը կարևորում է երկրի անվտանգության տեսանկյունից, մասնավորապես եթե նկատի ունենանք 12-րդ դարում Հայաստանի մասնատված և մահմեդական իշխանություններով շրջապատված լինելը:

Մատնացույց անելով միջնադարյան բերդաքաղաք Ամբերդի անառիկ բերդապարիսպներն ու վանդակաձաղերը, որոնց ետևում իշխանները պատսպարվում էին թե՛ թշնամիներից և թե՛ «անհնազանդ ձիերից», Հ. Օրբելին համախոս է դառնում առակագրին, որ չպետք է արհամարհել «թույլերին ու տկարներին», որովհետև նրանք ընդունակ են զորանալու և կործանելու հզորների բերդապարիսպներն ու վանդակաձաղերը³:

³ Ամբերդի առաջին պեղումներն իրականացրել ու ղեկավարել է հենց ինքը՝ Հ. Օրբելին, 1936 թ. (Օրբելի, 1968, 353):

Իհարկե, կան դաժան ու անհոգի տերեր, ինչպիսին Մ. Գոշի առակի հաշմանդամ առյուծն է, որը հպատակներից պահանջում է ընծաներ բերել և առողջացնել իր կոտրած ոտքը: Սակայն հպատակները հիշեցնում են առյուծին, որ նա երբեք իրենց չի պաշտպանել և, հակառակը, Աստծուն պիտի ընծա մատուցեն դաժան առյուծին արժանի պատիժ տալու համար (Орбели, 1968, 429):

Թե՛ Մ. Գոշի «Ոսկին և ցորենը», (Գոշ 1951, 122), թե՛ Վ. Այգեկցու «Եզն ու ձին» (Այգեկցի, 1935, 59-60) առակներում ցուցանշական է աշխարհը շենացնող աշխատանքի դերն ու հպատակների սոցիալական գիտակցության արթնացումը (Орбели, 1968, 294, 350-351):

Այս տրամադրությանը համահունչ են նաև հայկական գութաներգերի ձևերը, որոնք նվիրված են գութանին, եզանն ու բարեկեցությանը. «Վարենք, վարի տարին ա, գութանն Աստծու շարին ա» (Լալայեան, 1904, 70):

Նույն կերպ միջնադարյան առակներում իսկական գանձ է համարվում բարեբեր աշխատանքը, ինչն իր արտահայտությունն է գտել Վ. Այգեկցու «Завешание о кладе» (В. 210), («Կտակ գանձի մասին») (Орбели, 1968, 479) առակատիպ գրույցում:

Իսկ «Իշխանը և այրի կինը» (Այգեկցի, 1935, 45-46) հանրահայտ առակն արտացոլում է ժողովրդի ու բռնակալի փոխհարաբերությունը. «Եվ այժմ վախենում եմ, որ մեռնես, և քո որդին քեզանից ավելի չար լինի» (Орбели, 1968, 497):

5. Եզոպոսյան առակներն ու միջնադարյան կենդանապատումը՝ Վարդան Այգեկցու ստեղծագործությունների կենտրոնում

Վարդան Այգեկցու առակավոր ճառերի և խրատների հիմնական աղբյուրը եզոպոսյան առակներն էին, ինչպես նաև «Բարոյախոսը»⁴: Վերջինից նա քաղել է ութ առակ: Թեև Եզոպոսի անունը չի հիշատակվում հայ մատենագրության մեջ, բայց նրա առակներին հայ մատենագիրները ծանոթ են եղել 5-րդ դարից: Եզոպոսյան մի խումբ առակներ (15 միավոր)⁵ հայերեն թարգմանված և հռետորաբար մշակված հայտնի են Ողոմպիոսի անունով:

⁴Հնում շատ տարածված կենդանախոսական մի հիշատակարան է, կենդանիների բարքի մասին առակատիպ գրույցների մի ժողովածու: Նիկողայոս Մառն ու Հովսեփ Օրբելին կենդանիների մասին այդ ցիկը հակված են համարել կենդանապատում էպոս (Орбели, 1968, 222):

Հնուն տարածված կենդանախոսական երկացանկում առյուծն անպարտելի է: Սակայն, մշակելով ժողովրդական «Առյուծը և մարդը» (Այգեկցի, 1935, 83–84) առակը, Վարդան Այգեկցին ձգտել է ցույց տալ, որ կենդանական աշխարհում ամենից բարձրը բանական մարդն է, որն իր հնարամտությամբ առյուծին կապում է կաղնու ծառից՝ հաղթելով անգամ ամենագորեղ գազանին:

Վարդան Այգեկցու «Вол и конь» (В. 127) («Եզն ու ձին»), (Այգեկցի, 1935, 59–60), «Вдова и князь» (В. 356) («Իշխանը և այրի կինը»), (Օրбели, 1968, 497), «Поп-взяточник» (В.226) («Կաշառակեր տերտերը»), (Օրбели, 1968, 485) «Вдова и поп» (В. 54) («Այրի կինն ու քահանան»), (Օրбели, 1968, 349), Ողոմպիոսի «Волки и овцы» (Օ. 12) («Գայլերն ու ոչխարները»), (Օրбели, 1968, 502) և այլ առակներում արդեն փոխված է հայացքը ոչ միայն իշխանի, ազնվականի, այլև հոգևոր այրերի նկատմամբ: Սոցիալական և համակեցական հարցերը արծածվում են ավելի բացահայտ, մերկացվում են կաշառակեր դատավորներն ու անիրավ հոգևորականները. ավելին՝ հոգևորականությունը չուներ իր նախկին հեղինակությունը և ապրում էր բարբերի անկում: Վ. Այգեկցու «Այրի կինն ու քահանան» (Այգեկցի, 1935, 92–93) առակում հուսահատ այրին, բացելով բեմի վարագույրը, դիմում կովին. «О негодница, я тебя всегда считала коро-вой, так скажи же, кто тебя поставил служить обедню?») (Օրбели, 1968, 349):

Համարձակ ծաղրը Աստծո սպասավորներից անցնում է նաև երկնային տիրոջը: «Այրի կին և խորթ որդի» (Այգեկցի, 1935, 80) առակում պարզորոշ ծաղրվում է աղոթքի խորհուրդը, կասկածի տակ է առնվում աստծո գոյությունը և այրին լաց լինելով՝ հանդիմանում է աստծուն, որ էշը կովից չկարողացավ տարբերել:

Վ. Այգեկցու «Вдова и сын» (В. 214) («Այրի կինը և իր որդին»), (Օրбели, 1968, 480) առակը խրատում է, որ չի կարելի չարաշահել մարդկանց վստահությունը, հակառակ դեպքում կկորցնես ողջ ունեցվածքը:

Վ. Այգեկցու առակում երկու ոտքերով կաղ «Իմաստուն զինվորը» (Այգեկցի, 1935, 47), «Мудрый воин»⁵ (В. 270) (Օրбели, 1968, 329) պատերազմ է գնում ոչ թե փախչելու, այլ կովելու և հաղթելու մտադրությամբ:

Միաժամանակ առակագրի սրտով չեն փուչ պատճառներից ծագող պատերազմները, ինչպես մի կաթիլ մեղրի պատճառով երկու գյու-

⁵ Օրբելին իր «Միջնադարյան Հայաստանի առակները» գրքում այս առակը վերնագրել է՝ «Доблестный воин» (Օրбели, 1968, 329):

ղերի բնակիչների ընդհարումներն ու զոհերը: Այդ մասին է Վ. Այգեկցու «Капля меду» (Օրբели, 1968, 329) (Բ. 298) («Կաթ մեղր պատճառ պատերազմի»), (Այգեկցի, 1935, 52) ժողովրդական առակատիպ գրույցը, որի հիման վրա Հովհաննես Թումանյանը գրել է «Մի կաթիլ մեղր» բալլադը:

Առակի խոհախրատական մեկնաբանությունը Օրբելու թարգմանությամբ պահպանում է բնագրի լեզվական առանձնահատկությունները («Тут поднялись крестьяне обеих деревень и начали между собой великую войну, и произошло такое побоище, что остался в живых всего лишь один человек. И все это из за одной капли меду»), (Օրբели, 1968, 329).

Հայկական առակները ենթատեքստային խորության ու կառուցվածքային սեղմության շնորհիվ՝ միջնադարում ընթերցանության ամենասիրված նյութերից են եղել, որովհետև, «ինչպես առակը, այնպես էլ կյանքը գնահատվում է ոչ թե երկարությամբ, այլ բովանդակությամբ»-կարդում ենք Հովսեփ Օրբելու՝ Սանկտ Պետերբուրգի Պետական էրմիտաժում պահվող՝ իր իսկ ձեռքով գրված օրագրում (Բունիաթյան, Մկրտչյան 2012, 15):

Եզրակացություններ

Առակը՝ որպես ժողովրդական բանավեստի տեսակ՝ 12-րդ դարից մուտք է գործում գրավոր գրականություն՝ ազդարարելով գրականության աշխարհականացման մի նոր, կարևոր փուլ:

Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու հավաքած ու մշակած նյութերում Հովսեփ Օրբելին նկատում է առակների ոչ միայն ժողովրդական բովանդակությունը, այլև ոճը՝ ընդգծելով առակների բարոյաիրավական սկզբունքները:

Մ. Գոշի, Վ. Այգեկցու, Ողոմայիոսի առակներում արտացոլված են միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական իրադրության, մշակութային կյանքի վերաբերյալ մանրամասներ, որոնց ռուսերեն թարգմանությունն աչքի է ընկնում Հովսեփ Օրբելու հմուտ լեզվագագոռությամբ, հայերեն բնագրերի հետ ունեցած հարազատությամբ և ոճական վարպետությամբ:

Հովսեփ Օրբելին միջնադարյան Հայաստանի առակները (Մ. Գոշ, Վ. Այգեկցի, Ողոմայիոս) ուսումնասիրել, ռուսերեն է թարգմանել և դասակարգել ըստ Նիկողայոս Մառի առակների բանագիտական նշանակի՝

նպաստելով հայ բանահյուսության տվյալ ժանրի գիտական շրջանառությանը:

Ձեռնամուխ լինելով Մառի մեկտեղած հսկայածավալ նյութի ուսումնասիրությանն ու թարգմանությանը՝ Օրբելին սահմանել է հայկական առակների տեղն ու դերը տարբեր ժողովուրդների ստեղծած նմանատիպ հուշարձանների շարքում:

Թամար Լ. Հայրապետյան – գիտական հետաքրքրությունները՝ հայ ժողովրդական բանահյուսության վիպական ժանրերի, մասնավորապես՝ հայկական հրաշապատում հեքիաթների և միջազգային հեքիաթանյութի համեմատական տիպաբանություն, խորհրդանշանային համակարգի ուսումնասիրություն: Հեղինակ է 2 մենագրության, 5 ժողովածուների և ավելի քան 150 հոդվածների, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում:

Գրականության ցանկ

1. Աբեղյան, Մ. (1968). Հայոց հին գրականության պատմություն, Երկեր, հատ. Գ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
2. Ազգագրական հանդէս. (1904). գիրք XI, Թիֆլիս, (Բորչալու), տպ. Կ. Մարտիրոսեանցի:
3. Հակոբյան, Պ. (1995). Առակների տեսությունը միջնադարյան Հայաստանում: Պատմա-բանասիրական հանդէս, № 1:
4. Մխիթար Գոշ. (1951). Առակներ, Տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը՝ Էմ. Պիվազյանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:
5. Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի. (2010). Միջնադարյան Հայաստանի առակները, Եր., «Լուսաբաց հրատարակչատուն»:
6. Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց. (1880). իրաւաբանական հետազօտութիւնը հանդերձ ծանօթութեամբ Վահան ծ. Վարդապետի Բաստամենաց, Ի Վաղարշապատ ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի:
7. Յուզբաշյան, Կ. (1987). Ակադեմիկոս Հովսեփ Օրբելի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
8. Վարդան Այգեկցի. (1935). Աղվեսագիրք, Եր., Պետհրատ:
9. Օրբելի, Հ. (2012). Կազմող հեղինակներ՝ Մ. Բունիաթյան, Գ. Մկրտչյան, Եր., «Պարմա-Պրինս»:
10. Марр, Н. (1936). Армянская культура, ее корни и доисторические связи: Язык и история, книга 1, Ленинград.
11. Марр, Н. (1899). Сборники притч Вардана, Исследование, часть I, Санкт-Петербург.
12. Орбели, И. (2002). Избранные труды в двух томах, Составитель и редактор тома, д.и.н., проф. П. М. Мурадян, т. II, Материалы экспедиции 1911-1912 гг. по этнографии и фольклору Мокса, Словарь наречия Мокса, Ер., изд-во «Гитутюн» НАН РА.

13. Орбели, И. (1956). Басни средневековой Армении, Москва-Ленинград, изд-во Академии Наук СССР.
14. Орбели, И. (1968). Избранные труды в двух томах, т. I, Из истории культуры и искусства Армении X- XIII вв., Москва, Главная редакция восточной литературы, изд-во «Наука».
15. Орбели, И. (1982). Фольклор и быт Мокса, Москва, Главная редакция восточной литературы, изд-во «Наука».

Bibliography (Latin Script)

1. Abeghyan M., Hayots hin grakanutyan patmutyun, Erker, h. 3, Yer., 1968 (In Armenian).
2. Azgagrakan handes, girq XI (Borchalu), Tiflis, 1904 (In Armenian).
3. Hakobyan P., Arakneri tesutyuny mijnadaryan Hayastanum// Patma-banasirakan handes, № 1, 1995 (In Armenian).
4. Mkhitar Gosh, Arakner, teqsty dzeragreri hamematutyamb ev neratsutyuny - Em. Pivazyani, Yer., 1951 (In Armenian).
5. Mkhitar Gosh, Vardan Aygektsi, Mijnadaryan Hayastani araknery, Yer., 2010. (In Armenian).
6. Mkhitar Gosh, Datastanagirq hayots, iravabanakan hetazotutyunq handerdz tsanotutyamb Vahan tsayraguyn vardapeti Bastameantsi, Vagharshapat, 1880 (In Armenian).
7. Yuzbashyan K., Akademikos Hovsep Oerbeli, Yer., 1987 (In Armenian).
8. Vardan Aygektsi, Aghvesagirq, Yer., 1935 (In Armenian).
9. Orbeli H., Kazmogh heghinakner – M. Buniatyan, G. Mkrtchyan, Yer., 2012 (In Armenian)
10. Marr N., Armyanskaya kultura, yeyo korni i doistoricheskie svyazi: yazik i istoria, kniga 1, Leningrad, 1936 (In Russian).
11. Marr N., Sbornik pritch Varanda, Issledovanie, chast I, Sankt-Beterburg, 1899 (In Russian).
12. Orbeli I., Izbrannie trudi v dvukh tomakh, t. I, Iz istorii kulturi i isskustva Armenii X- XIII vv, Moskva, 1968 (In Russian).
13. Orbeli I., Izbrannie trudi v dvukh tomakh, t. II, Materiali ekspeditsii 1911-1912 gg, po etnografii i folkloru Moksa. Slovar narechia Moksa, Yer., 2002 (In Russian).
14. Orbeli I., Basni srednevekovoy Armenii, Moskva - Leningrad, 1956 (In Russian).
15. Orbeli I., Folklor i bit Moksa, Moskva, 1982 (In Russian).